Բանասիրական ֆակուլտետի խորհրդի հարգարժա՛ն անդամներ,

Ս.թ. հունվարի 30-ին, ժամը 11.00-ին, տեղի կունենա ֆակուլտետի խորհրդի նիստ:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՄ-3 կուրսի մագիստրոսական թեզերի պաշտպանության նախապատրաստական ընթացքի մասին:

զեկուցող՝ Աշոտ Գալստյան

2. Հեռակա ուսուցման տեսական դասընթացների մասին:

զեկուցող՝ Նաիրա Խաչատրյան

3. 2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի մեկնարկի մասին:

զեկուցողներ՝ Աշոտ Գալստյան

ամբիոնների վարիչներ

4. Ընթացիկ հարցեր:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի ՆԻՍՏ

Նախ, բանասիրական ֆակուլտետի դեկանը հայտնեց, որ փետրվարի 1-ից ստուիգումներ են սկսվելու, քանի որ հավատարմագրման 4 տարին ավարտվել է: Ուշադրություն պիտի դարձնել առարկայական նկարագրերին, թեզերի կատարմանը: Վերջնարդյունքներիը պետք է տեսանելի լինեն: Հիմնական շեշտը դրվելու է ուսուցման գործընթացի վրա: Պատրաստում ենք ուսուցիչներ, եւ պետք է առավել ուշադիր լինել: Նախապատրասկան գործընթացում ակտիվորեն ներգրավված է որակի պատասխանատու Անահիտ Հարությունյանը:

Այնուհետեւ անդրադարձավ ուսանողների թվաքականին եւ ընդունելության հարցերին: Ֆակուլտետն ունի 400-ից ավելի ուսանող, ինչը վատ ցուցանիշ չէ: Այս տարի հենակետային վարժարանից 3 հոգի դիմելու են բանասիրական, որոնցից 1-ը՝ մոզ մոտ: Մենք հաճախ հրավիրում ենք դիմորդների, նրանց ցուցադրում մեր տնտեսությունը:

4-րդ կուրսից 10 հոգի ցանկություն է հայտնել դիմելու մագիստրատուրա: Հեռակայից նույնպես դիմորդներ կան, որոնք նաեւ ցանկանում են ուսումը շարունակել առկա համակարգում:

Դեկանների մի մասը գտնում է, որ դպրոց այցելություններն արդյունք առանձնապես չեն տալիս, սակայն մեզ մոտ գոհ ենք արդյունքներից: Օրինակ՝ մեր այցելություններին ներգրավվում է նաեւ ամբիոնի վարիչ Տիկին Դոլուխանյանը:

Ֆակուլտետում դասերն իրականացվում են ըստ ժամանակացույցի: Բանասիրական դասախոսական կազմը պարտաճանաչ է: Որոշակի խնդիրներ առաջանում են այլ սպասարկող ամբիոնների դասախոսների հետ կապված:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ԼՍԵՑԻՆ՝ ՀՄ-3 կուրսի մագիստրոսական թեզերի պաշտպանության նախապատրաստական ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Գալստյանը, Հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Աելիտա Դոլուխանյանը, Հայոց լեզվի եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Վազգեն Համբարձումյանը, Հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Սուրեն Դանիելյանը:

Դեկանը նշեց, որ հանձնաժողովը պատրաստ է քննական աշխատանքներին: Լսարանը նույնպես կահավորված է:

Հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Աելիտա Դոլուխանյանը հայտնեց, որ 2-ը պետք է պաշտպանեն, 1-ի փոխարեն գրել էին:

Հայոց լեզվի եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Վազգեն Համբարձումյանը հայտնեց, որ 11 աշխատանքներն էլ բաշխավորվել են: Խնդիր կար մեկ ուսանողի հետ, սակայն մի քանի անգամ աշխատանքը խմբագրվելուց հետո երաշխավորվել է պաշտպանության:

Հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Սուրեն Դանիելյանը հայտնեց, որ 5 ուսանողից մեկը մերժվել է: Աշխատանքը ինքնուրույն չէր կատարված, մեկն էլ ծննդաբերության հետ կապված տարկետման մեջ է:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ֆակուլտետի դեկանի եւ ամբիոնի վարիչների զեկուցումներն ընդունել ի գիտություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ԼՍԵՑԻՆ՝ Հեռակա ուսուցման տեսական դասընթացների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ բանասիրական ֆակուլտետի փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ Նաիրա Խաչատրյանը:

Ն. Խաչատրյանը նշեց, որ բոլոր տեղեկագրերը լրացվում են ժամանակին: Կազմակերպման փուլում է լուծարքի շրջանը: Մեծ թվով ուսանողներ կան, որոնք մնացել են երկրորդ փուլ: Դա տեւելու է մինչեւ մարտի սկիզբ: Չհաղթահարելու դեպքում հեռացվում են: 12 կրեդիտի հնարավորություն չունի ավարտական կուրսը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ֆակուլտետի փոխդեկանի հաղորդումներն ընդունել ի գիտություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ԼՍԵՑԻՆ՝ 2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի մեկնարկի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Գալստյանը, Հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Աելիտա Դոլուխանյանը, Հայոց լեզվի եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Վազգեն Համբարձումյանը, Հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Սուրեն Դանիելյանը:

Նրանք նշեցին, որ ըստ էության պատրաստ են ուսումնական կիսամյակի մեկնարկին: Ստեղծված են էլեկտրոնային հարթակները, առարկայական նկարագրերը, հարցաշարերը եւ այլն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ արձանագրել, որ ֆակուլտետը պատրաստ է երկրորդ կիսամյակի ուսումնական մեկնարկին:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

Հարց 1

ԼՍԵՑԻՆ՝ Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պ/պ, մ.գ.թ. Գ. Խալաթյանի, դոցենտներ, մ.գ.թ. Ս. Թորգոմյանի և մ.գ.թ. Ռ. Հարությունյանի «Հայոց լեզվի մեթոդիկայի հարցեր (ուսումնական ձեռնարկ)» աշխատանքը հրատարակության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Վ. Համբարձումյանը, ֆակուլտետի դեկան, բ.գ.դ., պրոֆ. Աշոտ Գալստյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պ/պ, մ.գ.թ. Գ. Խալաթյանի, դոցենտներ, մ.գ.թ. Ս. Թորգոմյանի և մ.գ.թ. Ռ. Հարությունյանի «Հայոց լեզվի մեթոդիկայի հարցեր (ուսումնական ձեռնարկ)» աշխատանքը երաշխավորել հրատարակության:

Հարց 2

ԼՍԵՑԻՆ՝ բանասիրական ֆակուլտետի ՀԲ 4-րդ կուրսի ուսանողուհի Նունե Ռաֆայելի Սարուխանյանի՝ 2021-2022 ուստարվա 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան անցնելու թույլտվության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ֆակուլտետի դեկան, բ.գ.դ., պրոֆ. Աշոտ Գալստյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ բանասիրական ֆակուլտետի ՀԲ 4-րդ կուրսի ուսանողուհի Նունե Ռաֆայելի Սարուխանյանին թույլ տալ անցնել 2021-2023 ուստարվա 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան:

Հարց 3

ԼՍԵՑԻՆ՝ Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալիտա Գուրգենի Դոլուխանյանի «Հայ Բագրատունիների մայրաքաղաք Անին օտարազգի հայագետների և ճանապարհորդների գնահատմամբ» մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ բ.գ.դ., պրոֆ., Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալլիտա Դոլուխանյանը։

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալլիտա Գուրգենի Դոլուխանյանի «Հայ Բագրատունիների մայրաքաղաք Անին օտարազգի հայագետների և ճանապարհորդների գնահատմամբ» մենագրությունը երաշխավորել տպագրության։

Հարց 4

ԼՍԵՑԻՆ՝ Վ. Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Քնարիկ Արմենի Աբրահամյանի «Գրապատմական ազդեցություններն արեւմտահայ նամակագրության մեջ (1850-1920)» «Ժ.01.01. Հայ միջնադարյան եւ նոր գրականություն» մասնագիտությամբ դոկտորական ատենախոսության թեմայի եւ գիտական խորհրդատուի նշանակման հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Վ. Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը, ֆակուլտետի դեկան, բ.գ.դ., պրոֆ. Աշոտ Գալստյանը, Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ.գ.դ., պրոֆ. Ալլիտա Դոլուխանյանը։

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Վ. Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Քնարիկ Արմենի Աբրահամյանի դոկտորական ատենախոսության թեմա հաստատել «Գրապատմական ազդեցություններն արեւմտահայ նամակագրության մեջ (1850-1920)»՝ «Ժ.01.01. Հայ միջնադարյան եւ նոր գրականություն» մասնագիտությամբ, եւ գիտական խորհրդատու նշանակել բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանին։

Հարց 5

ԼՍԵՑԻՆ՝ 2018-ից Վ. Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Ալիսա Աշոտի Սահակյանի (թեմա՝ «Գրիգոր Զոհրապի եւ եվրոպական մտածողության զուգահեռների շուրջ», Ժ-01.01 «Հայ նոր գրականություն» մասնագիտությամբ, գիտական ղեկավար ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Սուրեն Դանիելյան) ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հակառակ հայցորդ Ա. Սահակյանի՝ ատենախոսության նյութերի անբավարար մշակման եւ անկանոնության փաստին՝ հնարավորություն տալ, իր ցանկության համաձայն, հայցորդական վերջին տարում ի մի բերելու աշխատանքները, եւ ատեստավորել:

Հարց 6

ԼՍԵՑԻՆ՝ Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի կազմած Աշոտ Աբրահամյանի 105-ամյակին նվիրված «Հայերենագիտական հետազոտություններ» գիրքը հրատարակության երաշխավորելու հարցը (խմբագիր՝ Վ. Համբարձումյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Վ. Համբարձումյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի կազմած Աշոտ Աբրահամյանի «Հայերենագիտական հետազոտություններ» գիրքը երաշխավորել հրատարակության:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԱՇՈՏ Վ. ԳԱԼՍՏՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՔՆԱՐԻԿ Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Բանասիրական ֆակուլտետի խորհրդի հարգարժա՛ն անդամներ,

Ս.թ. փետրվարի 9-ին, ժամը 12.20-ին, տեղի կունենա ֆակուլտետի խորհրդի նիստ:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի մեկնարկի մասին:

   զեկուցող՝ Աշոտ Գալստյան

2. Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտական խորհրդի անդամների առաջադրում:

   զեկուցող՝ Աշոտ Գալստյան

3. Պետական որակավավորման ավարտական քննությունների հանձնաժողովի նախագահ Վարդան Դեւրիկյանի հաշվետվության քննարկում:

   զեկուցող՝ Աշոտ Գալստյան

4. Ընթացիկ հարցեր:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի ՆԻՍՏ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ԼՍԵՑԻՆ՝ 2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի մեկնարկի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Գալստյանը:

Ֆակուլտետում արդեն մեկնարկել են երկրորդ կիսամյակի ուսումնական աշխատանքները: Դասացուցակները տրամադրված են ուսանողների, տեղադրված էլեկտրոնային հարթակում, դասընթացները ստեղծված են, դասախոսական կազմերը՝ պատրաստ աշխատանքի: Որակի պատասխանատուները պարբերաբար անցկացնում են համապատասխան ստուգումները, խնդիրները վերհանվում են ժամանակին եւ տրվում համապատասխան լուծումներ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ֆակուլտետի դեկանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ԼՍԵՑԻՆ՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտական խորհրդի անդամների առաջադրում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.դ., պրոֆ. Աշոտ Գալստյանը: Նա ներկայացրեց Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Վազգեն Համբարձումյանի, հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ.գ.դ., պրոֆ. Ալիտա Դոլուխանյանի, Վ. Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանի թեկնածությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ համալսարանի գիտական խորհրդի անդամներ առաջադրել Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ,

պրոֆ. Վազգեն Համբարձումյանին, հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ.գ.դ., պրոֆ. Ելիտա Դոլուխանյանին, Վ. Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանին:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ԼՍԵՑԻՆ՝ Պետական որակավավորման ավարտական քննությունների հանձնաժողովի նախագահ Վարդան Դեւրիկյանի հաշվետվության քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Գալստյանը:

Նա ներկայացրեց հանձնաժողովի նախագահի զեկուցագիրը: Նշեց, որ նա գուհունակություն է հայտնել կազմակերպական ընթացքից: Վարդան Դեւրիկյանի հաշվետվությունը կցվում է:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Պետական որակավավորման ավարտական քննությունների հանձնաժողովի նախագահ Վարդան Դեւրիկյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

Հարց 1

ԼՍԵՑԻՆ՝ Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆ., բ.գ.դ. Լալիկ Խաչատրյանի հեղինակած «Հին հայերենի քերականական համակարգի տիպաբանությունը» թեմայով աշխատանքը Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի կողմից հայագիտական հրատարակությունների դրամաշնորհի ներկայացվող աշխատանքների ցանկում ներառելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.դ., պրոֆ. Աշոտ Գալստյանը, Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆ., բ.գ.դ. Լալիկ Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ՝ Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆ., բ.գ.դ. Լալիկ Խաչատրյանի հեղինակած «Հին հայերենի քերականական համակարգի տիպաբանությունը» թեմայով աշխատանքը ներառել Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի կողմից հայագիտական հրատարակությունների դրամաշնորհի ներկայացվող աշխատանքների ցանկում:

Հարց 2

ԼՍԵՑԻՆ՝ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հեղինակած «Մայրենիի ուսուցման հիմնախնդիրը Սփյուռքի դպրոցներում» ծրագիրը Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի կողմից հայագիտական հրատարակությունների դրամաշնորհի ներկայացվող աշխատանքների ցանկում ներառելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.դ., պրոֆ. Աշոտ Գալստյանը, հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ.գ.դ., պրոֆ. Ալիտա Դոլուխանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հեղինակած «Մայրենիի ուսուցման հիմնախնդիրը Սփյուռքի դպրոցներում» ծրագիրը ներառել Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի կողմից հայագիտական հրատարակությունների դրամաշնորհի ներկայացվող աշխատանքների ցանկում:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԱՇՈՏ Վ. ԳԱԼՍՏՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՔՆԱՐԻԿ Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Բանասիրական ֆակուլտետի խորհրդի հարգարժա՛ն անդամներ,

Ս.թ. մայիսի 5-ին, ժամը 14.00-ին, տեղի կունենա ֆակուլտետի խորհրդի նիստ:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԱԲ-4, ՀԲ-5 կուրսերի ավարտական աշխատանքների եւ ԱՄ-2 կուրսի մագիստրոսական թեզերի պաշտպանությունների կազմակերպման մասին:
   զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ

2. 2023-2024 ուսումնական տարվա ընդունելության մասին:
   զեկուցող՝ Աշոտ Գալստյան

3. Ֆակուլտետի որակի ապահովման գործընթացի մասին:
   զեկուցողներ՝ ֆակուլտետի եւ ամբիոնների որակի պատասխանատուներ

4. Ընթացիկ հարցեր:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի ՆԻՍՏ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ԼՍԵՑԻՆ՝ ԱԲ-4, ՀԲ-5 կուրսերի ավարտական աշխատանքների եւ ԱՄ-2 կուրսի մագիստրոսական թեզերի պաշտպանությունների կազմակերպման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Գալստյանը, Հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Ալիտա Դոլուխանյանը, Հայոց լեզվի եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Վազգեն Համբարձումյանը, Հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Սուրեն Դանիելյանը:

Դեկանը նշեց, որ ավարտական քննական հանձնաժողովի նախագահ է նշանակվել Նեկտար Սիմոնյանը: Բակալավրիատում պետական քննության կմասնակցի 38 ուսանող, որոնցից՝ 4-ը՝ նախորդ տարիներից: Մագիստրատուրայում 14-ն են: Բոլոր նախապաշտպանությունները տեղի են ունեցել: Մագիստրոսական աշխատանքները պետք է ներկայացվեն արտաքին գրախոսման:

Ամբիոններում կատարված բոլոր աշխատանքներն էլ երաշխավորվել են պաշտպանության, թեպետ, ինչպես նշում են վարիչները, մի քանի անգամ են նախապաշտպանություններ կազմակերպվել: Մտահոգիչ է նաեւ մագիստրոսական աշխատանքների արտաքին գրախոսման հետ կապված պահանջը: Սովորաբար այդ աշխատանքը վճարովի է:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ դեկանի եւ ամբիոնի վարիչների հաղորդումներն ընդունել ի գիտություն եւ համարել, որ ֆակուլտետը պատրաստ է ավարտական քննություններին:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ԼՍԵՑԻՆ՝ 2023-2024 ուսումնական տարվա ընդունելության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.դ., պրոֆ. Աշոտ Գալստյանը:

Նա նշեց, որ բակալավրիատում 28 դիմորդ ունենք, ինչը վատ ցուցանիշ չէ: Իսկ առկա բակալավրիատի ավարտական կուրսի 35 ուսանողներից ուսումը շարունակելու ցանկություն է հայտնել 10-ը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ դեկանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետի որակի ապահովման գործընթացի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ որակի ապահովման պատասխանու բ.գ.թ. Անահիտ Հարությունյանը, ամբիոնների պատասխանատուներ Լիլիթ Հովսեփյանը, Արմենուհի Մուրադյանը, Աշխեն Յուզբաշյանը, հայոց լեզվի եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Վազգեն Համբարձումյանը:

Նշվեց, որ շարունակաբար աշխատանք է տարվում որակի բարձրացման ուղղությամբ, համապատասխանեցվում է փաստաթղթավարությունը: Թե՛ ֆակուլտետի, թե՛ ամբիոնների պատասխանատուները արագ արձագանքում են խնդիրներին: Աշխատում են ՄԿԾ-ների վերախմբագրման ուղղությամբ: Անանուն հարցումներ են իրականացվել, որոնց ակտիվությունը այնքան էլ մեծ չի եղել: Ուրախությամբ պիտի արձանագրել, որ ֆակուլտետում բավարար (3) նիշ ստացած դասախոսներ չկան: Հարցումներն անցկացվել երկրորդ եւ երրորդ կուրսերում:

Վազգեն Համբարձումյանն էլ ընդգծեց ոչ մասնագիտական ֆակուլտետներում փոխել հայոց լեզվի դասավանդման միջուկը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Որակի ապահովման գործընթացները ֆակուլտետում գնահատել բավարար:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

Հարց 1

ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետում պրակտիկայի ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ բանասիրական ֆակուլտետի պրակտիկայի ղեկավար. բ.գ.թ., դոցենտ Լուսինե Գալստյանը:

Նա խնդրեց մեթոդիստներին ավելի հետեւողական լինել եւ երկու օրվա ընթացքում պատրաստել համապատասխան փաստաթղթավարությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Լուսինե Գալստյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

Հարց 2

ԼՍԵՑԻՆ՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի՝ կամավորական աշխատանք կատարած ուսանողին հավելյալ կրթական միավորներ տրամադրելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.դ., պրոֆ. Աշոտ Գալստյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ բանասիրական ֆակուլտետի առկա բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհի Աստղիկ Արտյոմի Հակոբյանին տրամադրել 5 հավելյալ միավոր:

Հարց 3

ԼՍԵՑԻՆ՝ Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ Հասմիկ Հովսեփյանի «Գրիգոր Մագիստրոսի ստեղծագործությունները Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում» գիրքը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ.գ.դ., պրոֆ. Ալիտա Դոլուխանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հասմիկ Հովսեփյանի «Գրիգոր Մագիստրոսի ստեղծագործությունները Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում» գիրքը երաշխավորել տպագրության:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԱՇՈՏ Վ. ԳԱԼՍՏՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՔՆԱՐԻԿ Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ 2023 Թ. ՄԱՅԻՍԻ 15-Ի ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ

Նիստը վարում էր Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, հ.գ.դ., պրոֆ. Սրբուհի Գևորգյանը: Ներկա էին ֆակուլտետի խորհրդի բոլոր 18 անդամները:

ԼՍԵՑԻՆ՝ Բանասիրական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Վոլոդյայի Գալստյանին բանասիրական ֆակուլտետի դեկանի պաշտոնում ընտրելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ՀՊՄՀ ռեկտոր, հ.գ.դ., պրոֆ. Սրբուհի Գևորգյանը, ուսումնագիտական գծով պրոռեկտոր, համալսարանի գիտական քարտուղար, մ.գ.թ., դոցենտ Մարիամ Իսպիրյանը, բանասիրական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Վոլոդյայի Գալստյանը, հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ.գ.դ., պրոֆ. Աելիտա Դոլուխանյանը, հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Վազգեն Համբարձումյանը, հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը, հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսորներ, բանասիրական գիտությունների դոկտորներ Լալիկ Խաչատրյանը, Էդուարդ Մկրտչյանը, ՀԲ-3 կուրսի ուսանող Յուրա Ղարայանը:

Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը նշեց, որ առաջադրվել է մեկ թեկնածու՝ Աշոտ Գալստյանը: Այնուհետև Մ. Իսպիրյանը ներկայացրեց ընտրության կարգը: Նա նշեց, որ ռեկտորի՝ ապրիլի 12-ի հրամանով հայտարարված ժամկետներում համապատասխան փաստաթղթեր է ներկայացրել Աշոտ Գալստյանը: Նա համալսարանում աշխատում է 22 տարի և հեղինակել է 140 գիտամեթոդական աշխատանք:

Դեկանի թեկնածու Աշոտ Գալստյանը ներկայացրեց առաջիկա հինգ տարիների իր ծրագիրը (կցվում է):

Այնուհետև հնչեցին հարցեր:

Լալիկ Խաչատրյանը մտահոգություն հայտնեց գիտական կյանքի կազմակերպման շուրջ: Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը վերջին տարիներին ասպիրանտներ և հայցորդներ չունի: Ինչպե՞ս պիտի տեղի ունենա սերնդափոխության հարցը: Նա նշեց, որ իր պաշտոնավարման տարիներին պաշտպանել են տասը հոգի, որոնցից վեցն աշխատում են նույն ամբիոնում: Աշոտ Գալստյանը շեշտեց, որ հրավիրել են շուրջ մեկ տասնյակ ուսանողների՝ գիտական աշխատանքով զբաղվելու: Բանն այն է, որ խիստ ընտրություն է կատարվում: Ամբիոնն այս տարի ունի մեկ հայցորդ, որին ղեկավարում է ինքը:

Գայանե Խալաթյանը ցանկացավ իմանալ Ջավախքի ուսանողների հետ աշխատանքի հեռանկարի մասին: Գաղտնիք չէ, որ նրան լեզվական թույլ գիտելիքներ ունեն: Աշոտ Գալստյանը նշեց, որ նրանց հետ կկազմակերպվեն լրացուցիչ պարապմունքներ:

Ռեկտոր Ս. Գևորգյանին հետաքրքրում է թեկնածուի ներկայացրած ծրագրում խրախուսման մասին դրույթի իրականացման հնարավորությունը, քանի որ այդ կետը կենսական է նաև համալսարանի հավատարմագրման գործընթացի համար: Կա նաև ՄԿԾ-ներում փոփոխություններ մտցնելու հարցը՝ այլընտրանքային ծրագրեր կազմելու տեսանկյունից: Ինչպե՞ս է պատկերացնում թեկնածուն այս հարցերի լուծումը: Աշոտ Գալստյանը նկատեց, որ ուսանողները հաճախ են մասնակցում գիտաժողովների, նաև՝ դասախոսների հետ համատեղ: Վերջերս, օրինակ, հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը կազմակերպել էր ուսանողական գիտաժողով: Կարդացված զեկուցումները համապատասխան երաշխավորությունից հետո կտպագրվեն:

Այնուհետև հնչեցին ելույթներ:

Ա. Դոլուխանյանն ընդգծեց Աշոտ Գալստյանի մարդկային որակները. հոգատար է, նվիրված, աշխույժ մասնակցություն է բերում բոլոր ամբիոնների կազմակերպած միջոցառումներին: Ի վերջո, ֆակուլտետ նշանակում է դեկան:

Վ. Համբարձումյանն էլ ընդգծեց, որ իր ղեկավարած ամբիոնի 16 անդամից 14-ի ներկայությամբ է հաստատվել Աշոտ Գալստյանի թեկնածությունը: Իսկ թեկնածուին ինքը ճանաչում է ասպիրանտական տարիներից: Նա հաջողությամբ պաշտպանեց թեկնածուական աշխատանք, միաժամանակ հասցրեց զբաղվել մանկավարժական գործունեությամբ: Նա գնահատեց նաև Գալստյանի դոկտարական աշխատանքը և տպագրած երկու գրքերը, որոնցից մեկի խմբագիրն ինքն է եղել: Ա. Գալստյանը հաջողությամբ է տանում ֆակուլտետի նավը:

Ս. Դանիելյանը լավ է ճանաչում Ա. Գալստյանին: Գիտի նաև, թե ինչ խնդիրներ են դրված համալսարանի առջև: Նոր սահմանագիծ ենք հատում բոլորս. ուսումնական նոր ձևեր ու եղանակներ փնտրելու ու գտնելու քայլերի առջև ենք: Եվ սա վերաբերում է ոչ միայն բանասիրական ֆակուլտետին, այլև համալսարանի ու բարձրագույն կրթության ոլորտին ընդհանրապես: Դժվար է լինում հաճախ ուսանողների մեջ գտնել հերթափոխը: Ա. Գալստյանը կարողացել է ֆակուլտետում լարվածությունը նվազեցնել, մթնոլորտը հանդարտեցնել: Բայց մեր առջև կան խնդիրներ, որոնք առաջին հերթին վերաբերում են ուսանողների առաջադիմության հարցերին: Եվ եթե ուզում ենք, որ ֆակուլտետի կատարած աշխատանքը երևա նաև համալսարանում, պետք է զորավիգ լինենք նրան:

Էդ. Մկրտչյանը նշեց, որ Ա. Գալստյանի պաշտոնարավարման տարիներին որևէ թերություն չի նկատել: Նա հարգալից է բոլոր դասախոսների նկատմամբ: Իր ուսանողն է եղել: Եվ ինչպես սովորում էր, այնպես էլ հիմա ղեկավարում է ֆակուլտետը: Կարողացել է կատարել ծանր գիտական աշխատանք և դարձել է գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ուսանող Յուրա Ղարայանը բանասիրական է տեղափոխվել այլ ֆակուլտետից և այդ որոշումը կայացրել է Ա. Գալստյանի հետ մեկ հանդիպումից հետո: Նա նշեց, որ երջանիկ է այս դասախոսների ուսանողը լինելու համար: Ֆակուլտետը բարձր մակարդակի վրա է, և դա Ա. Գալստյանի շնորհիվ է:

Ելույթներից հետո բաց քվեարկությամբ ընտրվեցին հաշվիչ հանձնաժողովի 3 անդամներ՝ հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Լուսինե Գալստյան, հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար Գայանե Խալաթյան և դեկանի տեղակալ, դոցենտ Նաիրա Խաչատրյան: Նրանք, առաջնորդվելով ընտրության կանոնակարգով, հաշվիչ հանձնաժողովի նախագահ ընտրեցին Նաիրա Խաչատրյանին: Համապատասխան փաստաթղթավարությունը կազմակերպելուց հետո տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Համաձայն գաղտնի քվեարկության արդյունքների (խորհրդի 18 անդամներից նիստին ներկա էին 18-ը, քվեարկությանը մասնակցեցին 18-ը, 18 կողմ, 0 դեմ, 0 անվավեր քվեաթերթ)՝ բանասիրական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Վոլոդյայի Գալստյանին համարել ընտրված բանասիրական ֆակուլտետի դեկանի պաշտոնում:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՔՆԱՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ